ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 82-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 20–ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ավագանուն հաղորդում ներկայացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 29-ի N 68-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 18-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 27-ի N 45-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 83-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հաղորդումը Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 84-Ն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 68-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 29-ի «Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու՝ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» N 68-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետի «դ» ենթակետում ««4639-այլ ընթացիկ դրամաշնորհներ»» թիվը և բառերը փոխարինել ««4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 85-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գեոդեզիական գործիքը Արման Սամվելի Գևորգյանին վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին» N 53-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 2-րդ կետի

ա/ 1-ին ենթակետում «3 (երեք)» թիվը փոխարինել «12 (տասներկու)» թվով,

բ/ 2-րդ ենթակետում՝ «60000 (վաթսուն հազար)» թիվը փոխարինել «200000 (երկու հարյուր հազար)» թվով:

2. Սույ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 86-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 3-ին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-404-Ն և ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-393-Ն օրենքները՝ ավագանին **որոշում է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 96-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ (նոր խմբագրությամբ հաստատվել է Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 85-Լ որոշմամբ) կատարել փոփոխություն՝ ամբողջ տեքստում «աշխատակազմի քարտուղար» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության փոփոխությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ – 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 87-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով «Մար-Մոս» ՍՊԸ գնահատման ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 27-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» N 45-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ որոշման հավելվածում ավելացնել 23-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«23/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ փողոցի N 21 հասցեում գտնվող 10-002-0031-0254 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 05062026-10-0022) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,02 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 2360000 (երկու միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թ. N 88-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2026 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը՝ 17.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 20
ք. Ջերմուկ